I. Ընդհանուր դրույթներ

1. «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ՝ առանց անդամության սահմանափակման:
2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
3. Կազմակերպությունը գործում է օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, ինքնակառավարման, անդամության կամավորության, հաշվետվողականության, իրավահավասարության և հրապարակայնության սկզբունքներով:
4. Կազմակերպությունը չի հետապնդում քաղաքական նպատակներ, չի հարում որևէ քաղաքական հոսանքի:
5. Կազմակերպության աշխատանքային լեզուներն են՝ հայերենը և անգլերենը:
6. Կազմակերպության պատկերանիշը (լոգոն) Վիքիմեդիա Հիմնադրամի և նրա մասնաճյուղերի լոգոն է՝ սև կիսաշրջանագիծ, ընդհատված մասում սև շրջան, մեջտեղում երկու սև սեգմենտներ, ներքևում՝ WIKIMEDIA ARMENIA կամ Վիքիմեդիա Հայաստան կամ WIKIMEDIA AM կամ WMAM:
7. Կազմակերպության անվանումն է.
1) հայերեն լրիվ՝ «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպություն,
2) հայերեն կրճատ՝ «Վիքիմեդիա Հայաստան» ԳՀԿ,
3) անգլերեն լրիվ՝ "Wikimedia Armenia" Scientific-Educational Non-Governmental Organization,
4) անգլերեն կրճատ՝ "Wikimedia Armenia" SNGO:
8. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ստեղծելով առանձնացված ստորաբաժանումներ:
9. Կազմակերպության գործունեության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0023, Արշակունյաց պողոտա, շենք 4, 4-րդ հարկ:

10. Կազմակերպության գործունեությունն անժամկետ է:

II. Առաքելությունը, գործունեության նպատակները և շահառուների խմբերը

11. Կազմակերպության առաքելությունն է՝ ազատ գիտելիք ստեղծելու գաղափարները և ունակությունները հասանելի դարձնել յուրաքանչյուրին:
12. Կազմակերպության տեսլականն է՝ նպաստել հայերեն բովանդակության տարածմանն ու զարգացմանը, Վիքիմեդիա նախագծերի միջոցով այն դարձնել կրթության խթանման և գիտելիքի հարստացման միասնական ու լայնորեն հասանելի հարթակ:
13. Կազմակերպության հիմնական նպատակներն են՝
1) աջակցել կրթության զարգացմանը Հայաստանում՝ ստեղծելով և տարածելով ազատ բովանդակությամբ նյութեր,
2) աջակցել գիտելիքի մատչելիության հավասար հնարավորություններ ապահովելուն,
3) աջակցել ազատ բովանդակության ստեղծմանը ու տարածմանը՝ հատկապես Վիքիմեդիայի տարբեր նախագծերի միջոցով,
4) աջակցել կամավորական աշխատանքի ինստիտուտի զարգացմանը, համայնքային կյանքի ակտիվացմանը,
5) կազմակերպել վիքիկոնֆերանսներ, հավաքներ, աջակցել վիքիտեխնոլոգիաների ներդրմանը և տարածմանը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
6) կազմակերպել վիքիճամբարներ, աշխատաժողովներ, համաժողովներ, մրցույթներ, վիքիմեդիա նախագծերի տարածմանն ուղղված այլ թեմատիկ միջոցառումներ, հիմնադրել և վարել վիքիակումբներ՝ ներգրավելով վիքիխմբագիրներ ինչպես Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրներից,
7) կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ կրթության ոլորտի աշխուժացման և զարգացման նպատակով աշակերտների/ուսանողների և այլ անձանց ընդգրկվածությամբ,
8) խթանել գիտելիքի և կրթության տարածմանը, նպաստել կրթության որակի բարձրացմանը մրցանակների, պատվոգրերի, մեդալների, նվերների հանձնման, ինչպես նաև միջոցառումների կազմակերպման միջոցով,
9) ապահովել Վիքիմեդիա շարժման արտասահմանյան և հայաստանյան ներկայացուցիչների Հայաստանի Հանրապետությունում և/կամ այլ պետություններում

Վիքիմեդիա շարժման տարաբնույթ միջոցառումներին մասնակցությունը և/կամ դրանց նախաձեռնումը/կազմակերպումը:

14. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

15. Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակներին համապատասխան ունի շահառուներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

16. Կազմակերպության հնարավոր շահառուների խմբերն են.

1) «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպության անդամները,

2) ակտիվ վիքիխմբագիրներ Հայաստանի Հանրապետությունից, և այլ երկրներից առանց տարիքային, սեռային և այլ սահմանափակումների,

3) վիքիակումբները, դրանց անդամները, ակումբների համակարգողները, վիքիճամբարների մասնակիցները,

4) Վիքիմեդիա հիմնադրամի և Կազմակերպության նախագծերի մասնակիցները,

5) գիտական-կրթական գործունեությամբ զբաղվող ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ:

III. Կազմակերպությանն անդամագրվելու և անդամությունը դադարեցնելու կարգը: Կազմակերպության անդամների իրավունքներն ու պարտականությունները

17. Կազմակերպության անդամ կարող են դառնալ Կազմակերպության նպատակներն ու գործունեությունը համակրող, Կազմակերպության գործունեությանն աջակցելու պատրաստակամություն ունեցող, Կազմակերպության կանոնադրության դրույթները ընդունող Հայաստանի Հանրապետության, արտասահմանյան երկրների իրավաբանական անձինք, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք, որոնք առնվազն մեկ տարի ներգրավված են Կազմակերպության գործունեության որեւէ ոլորտում:

18. Կազմակերպության անդամ դառնալու, պատվավոր անդամի կոչում ստանալու, անդամությունից դուրս գալու կամ անդամության դադարեցման, անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի կիրարկման կարգի, անդամավճարի նախատեսման դեպքում՝ դրա վճարման չափի և կարգի, անդամների իրավունքների և պարտականությունների առանձնահատկությունները սահմանվում են

Կազմակերպության համապատասխան կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ), որն ընդունվում է Խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ:

19. Կազմակերպությանն անդամագրվելը և անդամությունից հեռացումը կատարվում է որոշման հիման վրա, որը կայացնելու իրավասությունը վերապահված է Խորհրդին: Կազմակերպության այն անդամը, ով պարբերաբար խախտում է սույն կանոնադրության դրույթները կամ չի կատարում Կազմակերպության Խորհրդի պարտադիր կատարման ենթակա որոշումները՝ Խորհրդի որոշմամբ հեռացվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

20. Կազմակերպության անդամ դառնալու համար անձը ներկայացնում է դիմում (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշում), որի ձևը հաստատում է Խորհուրդը: Խորհուրդն անդամության մասին որոշումը կայացնում է Խորհրդի որոշումներ ընդունելու ընդհանուր կարգով:

21. Կազմակերպության անդամի անդամությունը դադարում է, եթե նա

1) անդամությունը դադարեցնելու մասին դիմում է ներկայացրել,

2) չի կատարել և/կամ խախտել է իր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ և կանոնակարգերով սահմանված պարտավորությունները,

3) առանց հարգելի պատճառի երկու անգամ անընդմեջ չի մասնակցել Համաժողովին,

4) ի հայտ են եկել փաստեր, որ նա անդամակցելու պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին և/կամ անդամության հայտում ներկայացրել է կեղծ կամ ոչ արժանահավատ տեղեկություններ,

5) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած,

6) մահացել է,

7) վճարովի ծառայությունների մատուցման կամ ժամկետային եւ/կամ մշտական հիմունքներով աշխատանքային պայմանագրով վարձատրություն/աշխատավարձ է ստանում Կազմակերպությունից, եթե նման ծառայության եւ/կամ աշխատանքային պայմանագրի ժամկետը գումարային վեց ամսից ավելի է առաջին պայմանագրի կնքման պահից մեկ տարվա ընթացքում:

22. Խորհուրդն ընդունում է որոշում Կազմակերպության անդամի լիազորությունների դադարեցման մասին՝ որոշումներ ընդունելու ընդհանուր կարգով, բացառությամբ 21 կետի 5 կամ 6 ենթակետերի, որոնք գործում են ինքնաշխատ կերպով: Բացառությամբ 21 կետի 5 կամ 6 ենթակետերի, անդամին տրվում է հնարավորություն ներկայացնելու գրավոր բացատրություն: Բացատրություն չներկայացնելը հիմք չէ Խորհրդի կողմից որոշում չընդունելու համար:

23. Կազմակերպության անդամը՝ որոշումների կայացման ընթացքում զրկվում է ձայնի իրավունքից, եթե քննարկվում է իր կամ իր հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր եւ ընտանիքի այլ անդամ) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց: Խորհրդի ընդհանուր որոշումների կայացման գործընթացը ամրագրված է կանոնադրության 60-62 կետերում:

24. Կազմակերպությանն անդամությունը իր նախաձեռնությամբ դադարեցրած անձը Կազմակերպությունում կարող է վերաանդամագրվել դադարեցումից մեկ տարի անց ընդհանուր հիմունքներով, բացառությամբ 21 կետի 6 կամ 7 ենթակետերի:

25. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման կամ վերահսկողություն իրականացնող մարմիններում,

2) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով Համաժողովին, Կազմակերպության նախագահին, Խորհրդին, Վերստուգիչ հանձնաժողովին ներկայացնել դիմումներ, բողոքներ և առաջարկություններ,

3) տեղեկություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին՝ ըստ «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Օրենք»),

4) դուրս գալ Կազմակերպությունից,

5) անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ լիազոր ներկայացուցչի միջոցով ներկա գտնվելու Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին կամ կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին, ընդ որում՝ Կազմակերպության յուրաքանչյուր անդամ Համաժողովում ունի մեկ ձայնի իրավունք Համաժողովի քննարկման առարկա ցանկացած հարցի վերաբերյալ, բացառությամբ ձայնի իրավունքից զրկման դեպքերի,

6) Կազմակերպության առջև ծառացած խնդիրները լուծելու և նպատակներն իրագործելու համար օգտվել Կազմակերպության գույքից,

7) Կազմակերպության ղեկավար մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոք ներկայացնել Կազմակերպության վերստուգող մարմնին, Համաժողովին, կամ դատարան,

8) Կազմակերպության խորհրդի համաձայնությամբ և խորհրդի կողմից սահմանված կարգով օգտվելու Կազմակերպության ծառայություններից,

9) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

26. Կազմակերպության անդամը պարտավոր է.

1) հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

2) մասնակցել Կազմակերպության աշխատանքներին,

3) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
4) պահպանել Կազմակերպության գույքը, միաժամանակ փոխհատուցել իր կողմից ուղղակիորեն հասցված նյութական վնասը,
5) իր գործողություններով պահպանել Կազմակերպությունում ընդհանուր բարոյահոգեբանական մթնոլորտը,
6) պահպանել Կազմակերպության կառավարման մարմինների որոշումների բողոքարկման սույն կանոնադրությամբ սահմանված կարգը ,
7) մուծել անդամավճար, Խորհրդի կողմից սահմանված կանոնակարգով նախատեսված չափով և առանձնահատկություններին համապատասխան,
8) տեղեկացնել Խորհրդին անձնական տեղեկատվության (անձնագրային տվյալներ, բնակության հասցե, էլ. հասցե, հեռախոսահամար և այլն) փոփոխության մասին, տվյալ փոփոխությունից հետո առավելագույնը 1 /մեկ/ ամսվա ընթացքում,
9) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,
10) չբացահայտել անձնական տվյալ հանդիսացող տեղեկատվությունը:
27) 26-րդ կետով սահմանված պարտականություններից մեկի խախտումը կարող է հանգեցնել ընդհուպ անդամության դադարեցման: Որևէ կետի խախտման դեպքում լինում է նախազգուշացում: Խախտման շարունակության դեպքում՝ զգուշացում: Կրկին շարունակականության դեպքում՝ անդամության հեռացում:
28) Կազմակերպության անդամը Կազմակերպության սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:
29) Կազմակերպության անդամությունից բխող այլ իրավահարաբերությունները կարգավորվում են կանոնակարգերով:

IV. Կազմակերպության իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը

30) Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող,
2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով,
3) տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

4) կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ,
5) օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների ինչպես նաև կամավորների և շահառուների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
6) համագործակցել տեղական, օտարերկրյա և/կամ միջազգային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ստեղծելու շահույթ չհետապնդող տեղական գրանցման կազմակերպություն, կամ լինելու դրա անդամ, ինչպես նաև՝ համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը: «Վիքիմեդիա-Հայաստան»-ի պարտականությունն է ապահովել բոլոր նման կազմակերպությունների համար Վիքիմեդիայի սկզբունքներին և ուղեցույցներին:
7) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ,
8) կանոնակարգերով սահմանված կարգով ստեղծել ակումբներ, գրասենյակներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ,
9) կատարել օրենքով չարգելված այլ գործողություններ:
31. Կազմակերպությունը կարող է ունենալ կնիք հայերեն և անգլերեն գրառումներով:
32. Կազմակերպությունը պարտավոր է՝
1) կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը,
2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
3) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը,
4) կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն,
5) Օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր

կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր,

6) եթե հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Պետական եկամուտների կոմիտեի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթարկվել պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն,

7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը,

8) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:

33. Անօրինական գործունեություն ծավալելու համար Կազմակերպությունը և նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

34. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ վերջիններս պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար:

V. Կազմակերպության կառուցվածքը և կառավարման կարգը

35. Կազմակերպության կառավարման մարմիններն են Համաժողովը, Խորհուրդը, Նախագահը, Վերստուգող հանձնաժողովը:

36. Կազմակերպության անդամը կարող է ընդգրկված լինել Կազմակերպության մշտապես գործող միայն մեկ մարմնում:

VI. Համաժողով

37.Կազմակերպության բարձրագույն մարմինը Կազմակերպության անդամների Համաժողովն է: Համաժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

38. Համաժողովը կարող է լինել հերթական և արտահերթ:

39. Հերթական համաժողովը գումարվում է երեք տարին մեկ անգամ: Համաժողովը հրավիրվում է Կազմակերպության խորհրդի կողմից՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Խորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը, տեղը, ձևաչափը, ինչպես նաև Համաժողովի օրակարգի

նախնական տարբերակը: Խորհուրդն այդ մասին նախապես Համաժողովից ոչ ուշ քան 10 /տասն/ օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին կամ կառույցներին Համաժողովի անցկացման օրվա, ժամի, տեղի, ձևաչափի և նախնական օրակարգի մասին: Կազմակերպության խորհուրդը պետք է միջոցներ ձեռնարկի հավաստվելու, Կազմակերպության անդամների կողմից ծանուցման ստանալու փաստը (հեռախոսազանգ, նամակի/կամ էլ. հաղորդագրության կրկնակի ուղարկում և այլ ցանկացած միջոց):

40. Արտահերթ համաժողով գումարվում է.

1) Կազմակերպության խորհրդի,

2) Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի,

3) Վերստուգող մարմնի,

4) Գործադիր մարմնի նախաձեռնությամբ:

41. Կազմակերպության արտահերթ համաժողովը գումարվում է 40 կետով նախատեսված նախաձեռնությունից ոչ ուշ, քան 18 օրվա ընթացքում: Արտահերթ համաժողովի մասին անդամները պետք է ծանուցվեն արտահերթ համաժողով անցկացնելու օրվանից առնվազն 15 օր առաջ:

42. Համաժողովն իրավազոր է (քվորումն ապահովված է), եթե գումարվել է Օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների 3/5 (60%) ավելին: Համաժողովի անցկացման համար քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նույն օրակարգով նոր համաժողովի գումարման տարին, ամիսը և օրը, որի մասին ծանուցվում են Կազմակերպության բոլոր անդամները:

43. Համաժողովի աշխատանքը ղեկավարում է Համաժողովի նախագահողը: Համաժողովի նախագահողը և քարտուղարն ընտրվում են Համաժողովի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, տվյալ նիստի շրջանակներում:

44. Համաժողովի արդյունքում կազմվում է արձանագրություն, տվյալ Համաժողովի ընթացքում ընտրված քարտուղարի կողմից: Արձանագրությունը կազմվում է Համաժողովի ավարտից 10 (տասը) օրվա ընթացքում, ստորագրում են Համաժողովի նախագահողը և քարտուղարը: Արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) Համաժողովի գումարման կամ կազմակերպման օրը և վայրը,

2) Համաժողովին մասնակցելու իրավունք ունեցող և Համաժողովին մասնակցած անձանց անունները, ազգանունները, իսկ մասնակիցների թիվը տասից ավելի լինելու

դեպքում՝ միայն Համաժողովին մասնակցելու իրավունք ունեցող և Համաժողովին մասնակցած անձանց քանակը,

3) Համաժողովի օրակարգը,

4) Համաժողովի ընթացքում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Համաժողովի ընդունած որոշումները,

5) Համաժողովի նախագահողի և քարտուղարի անունը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

45. Համաժողովի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 10 տարի:

46. Համաժողովն իրավասու է՝

1) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը, ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին, հաստատելու Կազմակերպության կառուցվածքը,

2) դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և Կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,

3) ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,

4) ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,

5) առնվազն երեք տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Համաժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,

6) ընտրելու կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարին՝ Կազմակերպության նախագահին, Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի անդամներին,

7) իրականացնելու Օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

47. Համաժողովը որոշումներ է ընդունում Համաժողովին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

48. Եթե Համաժողովում քննարկվում է Համաժողովի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (որոնց արտաքին շահերը, այդ թվում՝ պայմանավորված ընտանեկան հարաբերություններով, նյութական ֆինանսական շահերով, առաջացնում են շահերի փաստացի կամ հավանական բախում), գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Համաժողովի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

49. Համաժողովի կազմակերպման աշխատանքներին Կազմակերպության նախագահի կամ խորհրդի համաձայնությամբ կարող են ներգրավված լինել նաև Կազմակերպության անդամ չհանդիսացող անձինք:

VII. Խորհուրդ

50. Կազմակերպության ընթացիկ կառավարման մարմինը Կազմակերպության Խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհրդն ընտրվում է Կազմակերպության Համաժողովի կողմից երեք տարի ժամկետով, ղեկավարում է Կազմակերպությունը հերթական Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում և գործում է հասարակական հիմունքներով:

51. Խորհրդի անդամների թիվը 5 է: Խորհրդի անդամը համարվում է ընտրված Համաժողովին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի անդամ կարող է ընտրվել այն ֆիզիկական անձը, որն ընդգրկված չէ Կազամակերպության այլ մարմիններում (Վերստուգիչ հանձնաժողով և կազմակերպության նախագահ) և Կազմակերպության աշխատակազմում:

52. Եթե 53 կետով սահմանված կարգավորումն էլ չի կիրառվում, ապա հրավիրվում է նոր համաժողով՝ թափուր տեղը լրացնելու համար, իսկ ընտրված անդմաները համարվում են լիազորությունները ստանձնած:

53. Խորհրդի անդամներն ընտրվում են քվեարկության միջոցով (որի ձևը՝ բաց կամ գաղտնի (փակ) ընտրում է Համաժողովը) համաձայն Կանոնադրության: Ընտրված են համարվում պարզ մեծամասնության շեմը հաղթահարած և առավել շատ ձայներ հավաքած թեկնածուները: Հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև կրկնակի քվեարկություն է անցկացվում:

54. Խորհուրդը կարող է ունենալ նաև պատվավոր անդամներ, առանց քվեարկելու (ձայնի) իրավունքի:

55. Խորհուրդը պաշտոնավարում է ընտրվելուց անմիջապես հետո երեք տարի ժամկետով, մինչև հաջորդ ընտրությունները: Խորհրդի պաշտոնաթող անդամները կարող են նորից վերընտրվել նոր խորհրդի կազմում:

56. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել որպես Խորհդի անդամ:

57. Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը լրանում է նրա ընտրության օրվան հաջորդող 3-րդ տարվա նույն օրը: Եթե նախքան այդ օրը Խորհրդի կազմը չի ձևավորվել, Խորհուրդը շարունակում է գործել մինչև հաջորդ Խորհրդի կազմի ձևավորումը:

58. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե՝

1) նա հրաժարականի մասին գրավոր դիմում է ներկայացրել Խորհրդին,
2) նա վարկաբեկել է Կազմակերպության բարի համբավը, պատճառել է նյութական վնաս, կամ հայտնաբերվել է շահերի բախման վիճակում գտնվելու փաստ,
3) վեց ամսվա ընթացքում երեք անգամ՝ առանց հարգելի պատճառի չի մասնակցել Խորհրդի նիստերին,
4) նա մահացել է կամ դատարանի վճռով ճանաչվել է մահացած կամ անհայտ բացակայող կամ անգործունակ:
59. Համաժողովն ընդունում է որոշում Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման մասին, բացառությամբ 58 կետի 1), 3) 4) ենթակետերի, որոնք գործում են ինքնաշխատ կերպով: Բացառությամբ 58 կետի 1), 3), 4) ենթակետերի Խորհրդի անդամին տրվում է հնարավորություն ներկայացնելու գրավոր բացատրություն, եթե նա չի ներկայացնում բացատրություն, ապա լիազորությունների դադարեցման մասին որոշումն ընդունվում է առանց բացատրության:
60. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են Խորհրդի Նախագահի կողմից երկու ամսվա ընթացքում նվազագույնը մեկ անգամ՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ: Խորհրդի նիստերը կարող են գումարվել Կազմակերպության Նախագահի, Վերստուգող Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Խորհրդի նախագահի կողմից:
61. Խորհրդի նախագահը նիստ գումարելուց առնվազն 5 օր առաջ ծանուցում է Խորհրդի անդամներին նիստի անցկացման վայրի և ժամի մասին՝ նշելով այն հարցերի շրջանակը, որը քննարկվելու է նիստի ընթացքում: Ծանուցումը կարող է ուղարկվել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ փոստային եղանակով:
62. Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհուրդը որոշումներ է կայացնում քվեարկությամբ՝ նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
63. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել Կազմակերպության անդամներ և այլ անձինք՝ Խորհրդի նախագահի հրավերով:
64. Խորհուրդն իրավասու է՝
1) ներկայացնել առաջարկություններ Համաժողովին՝ վերջինիս բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի առնչությամբ,
2) ստեղծել Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,
3) Կազմակերպության աշխատանքների կազմակերպման նպատակով կազմավորել հանձնաժողովներ և կարգավորել դրանց գործունեության կարգը,
4) ընդունել Կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնակարգեր,

5) ընտրել Կազմակերպության աուդիտն իրականացնողին (աուդիտորին), եթե Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,
6) հաստատել Կազմակերպության ռազմավարությունը,
7) հաստատել անդամավճարների չափը և գանձման կարգը,
8) հաստատել Կազմակերպության առաջիկա գործունեության պլանը,
9) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանել վարձատրության կարգը և պայմանները,
10) ստեղծել մասնագիտական, աշխատանքային և այլ խմբեր,
11) ընդունել Կազմակերպության անդամ և հեռացնել Կազմակերպության անդամությունից:
65. Խորհուրդը պարտավոր է՝
1) գործել բացառությամբ Կազմակերպության լավագույն շահից,
2) գումարել Համաժողով Կանոնադրությամբ սահմանված կարգով,
3) բարեխղճորեն կատարել իր պատականությունները և իրացնել իրավունքները,
4) ներկայացնել հաշվետվություն Համաժողովին՝ Կազմակերպության գործունեության վերաբերյալ,
5) իր գործողություններով նպաստել Կազմակերպության հեղինակության բարձրացմանը,
6) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և Համաժողովի որոշումները,
7) չհրապարակել Կազմակերպությանը, դրա անդամներին կամ աշխատակիցներին վերաբերվող անձնական գաղտնիք պարունակող տեղեկատվություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
8) տարին մեկ անգամ հրավիրել հաշվետու ժողով՝ համաձայն Կանոնակարգի,
9) համաձայնություն է տալիս Կազմակերպության Նախագահի կողմից կնքվող այն գործարքների կամ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ, որոնք նախատեսված չեն տարեկան պլանով և գերազանցում են 450.000 ՀՀ դրամը:
10) կատարել Օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:
66. Խորհուրդն իր կազմից ընտրում է Խորհրդի Նախագահ՝ երեք տարի ժամկետով: Խորհրդի նախագահի կամ քարտուղարի թափուր պաշտոնը համալրվում է 30-օրյա ժամկետում: Խորհրդի նախագահի կամ քարտուղարի ժամանակավոր բացակայության կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում նրան փոխարինում է Խորհրդի անդամներից որևէ մեկը՝ Խորհրդի որոշմամբ:
67. Խորհրդի նախագահն իրավասու է՝

1) կնքել պայմանագիր Կազմակերպության նախագահի հետ, եթե նման պայմանագրի կնքումը նախատեսված է Օրենքով կամ Կանոնադրությամբ,

68. Խորհրդի նախագահը պարտավոր է՝

1) վերահսկել և համակարգել Խորհրդի նիստերի գումարման, անցկացման և որոշումների կայացման ընթացակարգերի պահպանման գործընթացի համապատասխանությունը Օրենքին և Կանոնադրությանը,

2) անձամբ կամ իր կողմից պատվիրակված անձի միջոցով ապահովել նիստերի նախնական օրակարգի և արձանագրությունների կազմման, հրապարակման և գրանցումային պահեստավորման գործընթացները,

3) իր գործառույթներն իրականացնել միայն ի շահ Կազմակերպության:

69. Խորհրդի նիստի արդյունքում կազմվում է արձանագրություն, Խորհրդի նախագահի կամ նրա կողմից պատվիրակված այլ անձի կողմից: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 5 (հինգ) օրվա ընթացքում և ստորագրվում է Խորհրդի նախագահի և քարտուղարի կողմից:

Արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

1) նիստի գումարման օրը և վայրը,

2) նիստին մասնակցած անձանց անունները, ազգանունները,

3) նիստի օրակարգը,

4) նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստում ընդունված որոշումները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

70. Խորհրդի գործառույթների իրականացմանը կարող են աջակցել Կազմակերպության Նախագահը, աշխատակիցները, Կազմակերպության անդամները:

71. Եթե Խորհուրդը քննարկում է Խորհրդի որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր և ընտանիքի այլ անդամներ) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա Խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

VIII. Նախագահ

72. Կազմակերպության ամենօրյա գործունեությունը, Կազմակերպության առաքելության և նպատակների իրականացմանն ուղղված գործունեությունը համակարգում, ղեկավարում և կազմակերպում է Կազմակերպության նախագահը (այսուհետ նաև՝ Նախագահ):

73. Կազմակերպության նախագահը ընտրվում է Համաժողովի կողմից՝ երեք տարի ժամկետով:

74. Նախագահը՝

1) ապահովում է Համաժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից: Կազմակերպության կողմից կնքվող այն գործարքները կամ ֆինանսական գործառնությունները, որոնք նախատեսված չեն տարեկան պլանով և գերազանցում են 450.000 ՀՀ դրամը Նախագահը հաստատում է Խորհրդի համաձայնությամբ:

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,

5) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

6) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը,

7) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

8) ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ աշխատանքները,

9) սահմանում է պարտականությունների բաշխում Կազմակերպության աշխատակիցների միջև, վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության նյութական ռեսուրսների ձևավորման, բաշխման և օգտագործման շրջանակներում առաջացող գործընթացների նկատմամբ,

10) դրամահավաքության միջոցով Կազմակերպության հաստատված ռազմավարական ծրագրի շրջանակներում քայլեր է ձեռնարկում, մշակում և իրականացնում է ծրագրեր,

11) որոշում է կայացնում աշխատողներ ընդունելու և աշխատանքից հեռացնելու վերաբերյալ,

12) իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,

13) հաստատում է Համաժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան

հաշվետվությունները, ինչպես նաև Կազմակերպության մարմինների հաշվետվությունները որոնք երեք տարին մեկ անգամ ներկայացնում է Համաժողովի հաստատմանը,

14) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

75. Նախագահի բացակայության ժամանակ նրա գործառույթներն իրականացնում է Կազմակերպության Խորհրդի կողմից լիազորված համապատասխան աշխատակիցը:

IX. Վերստուգող հանձնաժողով

76. Վերստուգող հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) ընտրվում է Կազմակերպության Համաժողովի կողմից երեք տարի ժամկետով և գործում է հերթական Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում հասարակական հիմունքներով: Հանձնաժողովի անդամ է ընտրվում առավել շատ ձայներ հավաքած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում կատարվում է քվեարկություն՝ ընդհանուր կարգով:

77. Վերստուգող հանձնաժողովը բաղկացած է երեք անդամից՝ նախագահ և երկու անդամ: Վերստուգող հանձնաժողովի անդամը չի կարող լինել միաժամանակ Կազմակերպության այլ ղեկավար մարմնի անդամ կամ աշխատակից, և չի կարող ներգրավվել կազմակերպության վճարովի աշխատանքերում: Հանձնաժողովն իր կազմից քվեարկությամբ ընտրում է Հանձնաժողովի նախագահին:

78. Հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել Կազմակերպությանը առնվազն մեկ տարի անդամակցող անձը:

79. Հանձնաժողովը վերահսկում է Խորհրդի, Նախագահի աշխատանքը, Կազմակերպության ֆինանսական գործունեությունը և Կազմակերպության անդամության վերաբերյալ հարցերը:

80. Հանձնաժողովը կատարում է անդամության հայտ ներկայացրած անձանց տվյալների ստուգում և տալիս է եզրակացություն թեկնածու համարվող անձի՝ Օրենքին, Կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխանության մասին:

81. Հանձնաժողովն իրավունք ունի պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

82. Հանձնաժողովը Համաժողովին ներկայացնում է իր կատարած աշխատանքների հաշվետվությունը:

83. Հանձնաժողովը տարին մեկ անգամ անցկացնում է Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում: Հանձնաժողովն ուսումնասիրում և

խորհրդատվություն է տրամադրում Կազմակերպության բյուջեի ձևավորման, ծախսի, կայունության և աճի գործընթացների վերաբերյալ:

84. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովը նիստ է հրավիրում սեփական նախաձեռնությամբ, Խորհրդի, Նախագահի, Կազմակերպության անդամների և աշխատակիցների գրավոր կամ էլեկտրոնային դիմումի հիման վրա: Հանձնաժողովի որոշումն ուղարկվում է Խորհրդին, Նախագահին, դիմումատուին, շահագրգիռ կողմերին և հրապարակվում է Կազմակերպության պաշտոնական կայքում: Եթե արձանագրության մեջ պարունակվում է անձնական տեղեկատվություն, ապա այդ մասը չի հրապարակվում:

85. Հանձնաժողովն իրականացնում է Կազմակերպության անդամների վարքագծի կանոնների պահպանման եւ շահերի բախման նկատմամբ հսկողություն:

Եթե Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվում է Կազմակերպության անդամի կողմից վարքագծի կանոնների խախտում, ապա Խորհուրդն առաջիկա նիստում ընդգրկում է Կազմակերպության անդամի պատասխանատվության հարցը:

86. Վերստուգող հանձնաժողովն իր ընթացիկ գործունեությունը կազմակերպում է Կանոնադրությանը համապատասխան:

87. Հանձնաժողովն իրավասու է՝

1) տարին մեկ անցկացնելու Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում.

2) ծանոթանալու Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և գրավոր կարգով պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու նրա մարմիններին, որոնք պարտավոր են ողջամիտ ժամկետում ներկայացնել գրավոր պատասխաններ.

3) պահանջելու և ստանալու Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ.

4) իրականացնելու Կազմակերպության կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

Համաժողովին ներկայացվող Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման Նախագահի տարեկան հաշվետվությանը կից ներկայացվում է Հանձնաժողովի եզրակացությունը:

X. Կառավարման մարմինների որոշումների բողոքարկման կարգը

88. Կազմակերպության կառավարման մարմինների կողմից կայացվող որոշումները կարող են բողոքարկվել Կազմակերպության ներսում գործող մարմիններում՝ հաշվի

...նոնադրությամբ սահմանված յուրաքանչյուր մարմնի իրավասության ...Ընդ որում որոշումների բողոքարկման վերջնական օղակը Համաժողովն է ...ստանի Հանրապետության դատարանները:

XI. Կառուցվածքային ստորաբաժանումներ

89. Կազմակերպությունը Համաժողովի որոշմամբ կարող է ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ՝ ապահովելով նրանց գործունեության համար պայմաններ:
90. Կազմակերպության նախագահի որոշմամբ կարող են ստեղծվել ակումբներ, գրասենյակներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ: Կառուցվածքային ստորաբաժանումները հետապնդում են նույն նպատակները, ինչ Կազմակերպությունը:

XII. Կազմակերպության գույքի գոյացման աղբյուրները և օգտագործման կարգը

91. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ եւ շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր եւ օրենքով չարգելված այլ գույք:
92. Կազմակերպության սեփականությունը գոյանում է դրամաշնորհներից, նվիրատվություններից, անդամավճարներից (առկայության դեպքում), օրենքով եւ կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացված գործունեությունից:
93. Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը կազմակերպության սեփականությունն է:
94. Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար և այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով սահմանված կարգով:
95. Կազմակերպության հիմնադիրները և անդամները Կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի (ներառյալ՝ անդամավճարները) նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք իրենց պատկանող գույքով պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:
96. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամների միջև:

XIII. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

97. Կազմակերպության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

98. Կազմակերպության գործունեությունը կարող է որոշակի ժամկետով կասեցվել դատարանի որոշմամբ՝ Լիազոր մարմնի դիմումի հիման վրա:

99. Կազմակերպության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

100. Կազմակերպությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության հետևանքով:

101. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Կազմված է 30. 08. 2022թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՎԻՔԻՄԵԴԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«30» 08 2022թ.

ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) Արշակ Շահենյան
(անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«14» 05 2013 Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 211.171.767514

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝

00123832

«30» 06 2020 Թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ
001-2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«26» սեպտեմբերի 2022 Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԻՔԻՄԵԴԻԱ ՀԱՅԱՍՏԱՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)